ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-27/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրքերի կազմման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 28.10.2026թ. N 649/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.11.2026թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Բարխուդարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Միքայելյանը, Խ.Պետրոսյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-27/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Բարխուդարյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-27/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
-«Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ-ն (ք.Երևան, Թումանյան թղմ 6/3շ, բն.20)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

ՀՀ	Շ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			գնման գինը ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ	Գրքերի կազմման ծառայություններ	7 184 281	0%	7 184 281	**7 256 850**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հրավերում 03.11.2026թ. կատարվել է փոփոխություն, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

-Էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած «Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Հաշվի առնելով, որ «Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-«Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3" Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Նարինե Առաքելյան Աշոտի» ԱՁ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Բարխուդարյան

Անդամներ՝ Ա.Միքայելյան

Խ.Պետրոսյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան